

Կենսաթոշակային նոր օրենսդրության մասին իրազեկման դասընթաց Վայոց ձորի մարզում

28.11.2013



Ս/թ նոյեմբերի 28-ին, Վայոց ձոր մարզի Վայք քաղաքում տեղի ունեցավ „Կենսաթոշակային նոր օրենսդրության մասին իրազեկման դասընթաց, որը կազմակերպել էր ԱՄՆ ՄԶԳ „Կենսաթոշակային համակարգի իրականացման ծրագրի,, (USAID PRIP) շրջանակում: Դասընթացին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Խաչիկ Գևորգյանը:

Դասընթացը նախատեսված էր Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Վայոց ձորի մարզի տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների, ինչպես նաև մարզում գործող սոցիալական ոլորտի այլ մարմինների աշխատակիցների համար: Մարզպետը նախ ողջունեց մասնակիցներին, միջոցառումն կազմակերպիչներին, այնուհետև խոսեց կենսաթոշակային բարեփոխումների անհրաժեշտության և արդիականության մասին: Դասընթացը վարում էր Սոցիալական ապահովության պետական ծառայության պետի առաջին տեղակալ Սմբատ Սախյանը: